



European Union

## Մամլո հաղորդագրություն

1 սեպտեմբեր, 2011  
ԵՐԵՎԱՆ

### Դասավանդումը որպես որակյալ կրթության նախապայման

ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի և “Essex” -ի համալսարանի համագործակցության շրջանակներում 2011թ.- ի սեպտեմբերի 1-3 կազմակերպվեց եռօրյա վերապարաստման դասընթաց կրթության որակի և դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ: Դասընթացը մշակել է “Essex”-ի համալսարանի Մարդու իրավունքների կենտրոնի ղեկավար պարոն Ռայներ Շուլցը: Վերապարաստումը հիմնականում կազմակերպվել էր “Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն” և “Եվրոպագիություն” մագիստրոսական ծրագրերում դասավանդող դասախոսների համար: Եռօրյա դասընթացի արդյունքում մասնակիցները ձեռք բերեցին ինչպես տեսական այնպես էլ գործնական գիտելիքներ որակի ապահովման մի շարք կարևոր բնագավառների մասին, որոնք ազդում են դասավանդման և կրթության որակի վրա:

Դասընթացին մասնակցում էին Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների և Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի մի շարք դասախոսներ: Վերապարաստման դասընթացի սկզբում ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Սասուն Մելիքյանը ներկայացրեց կրթության որակի ապահովման կարևորությունը և Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ՀՀ-ում իրականացրած բարեփոխումները: Այնուհետև, ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի և “Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն” տարածաշրջանային մագիստրոսական ծրագրի ղեկավար Ա. Ղազինյանը ներկայացրեց մագիստրոսական ծրագիրը և պատասխանեց մասնակիցների հարցերին: Վերապարաստման ընթացքում քննարկվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են որակի

ապահովումը ներառյալ կրկնակի գնահատումը, գրագողությունը, ուսանողների բողոքները, առարկայական ծրագրերի մշակումը, ուսումնառության արդյունքների մշակումը, գնահատումը, դասավանդման մեթոդները, և այլն:

Վերապատրաստման դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր Երևանի պետական համալսարանի և Էսսեքսի համալսարանի կողմից: